ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» հուլիսի 2022 թվականի N:395-Ա ք.Գյումրի

ԱՐՄԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի, նույն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Արմինե Սուքիասյանի 2022 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմինե Սուքիասյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդից 20 աշխատանքային օր՝ 2022 թվականի հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 19-ը ներառյալ:

2. Արմինե Սուքիասյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Արմինե Աբրահամյանին:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է